

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2023
N 2 (59)

Գիտական հանդես Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

Ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardadatutyunjournal.com

Հրապարակված է 28.12.2023թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Արթուրի Գալյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, Արդարադատության երրորդ դասի խորհրդական, խմբագրական խորհրդի նախագահ

Srbuhi Galyan – Deputy of the Prosecutor General of the Republic of Armenia, Third Class State Counsellor of Justice, Chairman of the Editorial Board

Աշոտ Հայրապետյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, գլխավոր խմբագիր

Ashot Hayrapetyan – Doctor of Law, Associate Professor, Chief Editor

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Artak Asatryan – PhD in Law

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Volodya Hovhannisyan – Doctor of Law, Associate Professor

Արմեն Եսայան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Yesayan – Doctor of Law, Professor

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր

Grigor Badiryan – Doctor of Law

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor

Ժորա Ջհանգիրյան – «Գլաձոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ruben Avagyan – Rector of “Manc” University, Doctor of Law, Professor

Արփինե Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Arpine Hovhannisyan – PhD in Law, Associate Professor

Սուրեն Քրմոյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Suren Krmoyan – PhD in Law

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor

Գարիկ Քեռյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Hayk Kupelyants – PhD in Law

Ալեքսանդր Կրիմով – ՌԴ Սանկտ Պետերբուրգի պատիժների իրականացման դաշնային ծառայության համալսարանի դեկան, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Alexandr Krymov - Head of the St. Petersburg University of the Federal Penitentiary Service of Russia (FPS of Russia), Major General of the Internal Service, Doctor of Law, Professor

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր

Andrey Skiba – Head of Chair / Legal Faculty- Chair of Criminal and Executive Right of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Law, Associate Professor, Major of Internal Service

Եվգենի Բարաշ – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Yevhen Barash – Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine

Հենրիկ Լինդեբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Law

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Սերգեյ Չերնյակսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Serhii Cherniavskiy – Vice-Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Law, Professor

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Associate Professor

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Procedure of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Law, Professor

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Aleksandr Rubis – Professor of the Department of Criminal Procedure of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Law, Professor

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6 ԱՐՓԻ ԼԱՁԱՐՅԱՆ

Կին դատապարտյալների հետ վարվեցողության միժազգային չափորոշիչները և դրանց կիրարման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում

11 ԿԱՐԵՆ ՍԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Կորպորացիան հսկող անձանց պատասխանատվության առանձնահատկությունները

19 ՀԱՅԿ ՂԱՁԱՐՅԱՆ

Դատական կարգով վարչական ակտի կասեցման հիմնախնդիրները անձի իրավունքների պաշտպանության համատեքստում

28 ԱՐՄԱՆ ՀԱԿՈՔՉԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանությունն արտաքին քաղաքականության իրականացման համակարգում

34 ВЕРОНИКА ПЕТРОСЯН

Суррогатное материнство как форма реализации репродуктивных прав

40 АННА АБРАМОВА

Международно-правовые аспекты реализации права на забвение. Проблемы и тенденции развития

ԱՐՓԻ ԼԱԶԱՐՅԱՆ

ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի հայցորդ,
Արդարադատության նախարարության քրեական
օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի
ոլորտի քաղաքականության մշակման վարչության,
քրեական և քրեադատավարական օրենսդրության
մշակման բաժնի պետ
Ներքին գործերի նախարարության ոստիկանության
կրթահամալիրի քրեական իրավունքի և
քրեաբանության ամբիոնի դասախոս

ԿԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը նվիրված է կին դատապարտյալի հետ վարվեցողության չափորոշիչներին և Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառման հիմնախնդիրներին: Հեղինակի կողմից համադրված վերլուծվել է ներկայացված ոլորտի հիմնական միջազգային ակտերի և ներպետական օրենսդրությունը և չնայած այն հանգամանքին, որ ներպետական օրենսդրությունը հիմնական չափորոշիչներով համապատասխանում է միազգային ստանդարտներին, բայց այնուամենայնիվ կատարված վերլուծության հիման վրա հեղինակը եկել է այն եզրահանգմանը, որ կին դատապարտյալները իրենց ֆիզիոլոգիական առանձնահատկություններով պայմանավորված պետք է պետության հոգածության տակ լինեն:

Հիմնաբառեր- Կին, դատապարտյալ, միջազգային, չափորոշիչ, ազատագրում

Հայաստանի Հանրապետությունում հանցավորության մակարդակի և քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թվերի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանայք կազմում են քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց փոքր մասը: Միևնույն ժամանակ հարկ է արձանագրել, որ հետաքրքրական է այլ երկրների վիճակագրությունը, քանզի աշխարհի մի շարք երկրներում հանցավորության մակարդակին զուգահեռ աճում է նաև կանանց հանցավորության մակարդակը և քիչ չեն այն դեպքերը, երբ փոքր իրավախախտումների համար կանայք հայտնվում են «ճաղերից այն կողմ»¹:

Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտից ստացված տվյալների համաձայն՝ 2020 թվականին քննվել է կանանց վերաբերյալ 92 քրեական գործ, 2021 թվականին՝ 103 քրեական գործ, իսկ 2022 թվականին՝ 75 քրեական գործ: Միևնույն ժամանակ ուսումնասիրված վիճակագրական տվյալները վկայում են, որ տարեցտարի նվազում է կանանց նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված պատիժների և հարկադրանքի միջոցների կիրառման թիվը:

Պրոբացիայի ծառայությունից ստացված վիճակագրության համաձայն՝ 2020 թվականին Պրոբացիայի ծառայությունում հաշվառված է եղել 2486 շահառու, որից 352-ը կին, 2021 թվականին՝ 3293 շահառու, որից 210-ը կին, 2022 թվականին՝ 3628 շահառու, որից 188 կին, իսկ 2023 թվականի հուլիսի դրությամբ հաշվառված է եղել 3844 շահառու, որից 223-ը կին:

Քրեակատարողական ծառայությունից ստացված վիճակագրական տվյալների համաձայն՝ կին դատապարտյալների և կալանավորված անձանց թիվն էականորեն նվազել է: Վիճակագրական տվյալները ներկայացվում են ստորև (տես՝ Աղյուսյակ թիվ 1):

Աղյուսյակ 1

Տարեթիվ	Կլին դատապարտյալ	Կլին կալանավորված անձ
2015	124	48
2016	117	35
2017	86	39
2018	47	25
2019	34	35
2020	29	17
2021	27	34
2022	23	38

Հայաստանի Հանրապետությունում կանանց,

այդ թվում՝ կին դատապարտյալների իրավունքների պաշտպանությամբ զբաղվում են մի շարք հասարակական կազմակերպություններ:

Այս ոլորտում զարգացած է նաև միջազգային փորձը: Կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված են մի շարք միջազգային իրավական ակտեր, դրանց շարքին են դասվում Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան («ՄԻԴԱ», 1979թ.), որը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1993 թվականին և դրա Կամբոտի արձանագրությունը (1999թ.), ինչպես նաև «Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ» ՄԻԴԱ կոմիտեի ընդհանուր բնույթի Հ-19 (1992) Հանձնարարականը:

Կանանց իրավունքների պաշտպանությանն է ուղղված նաև Եվրոպայի խորհրդի՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան, որը ընդունվել է 2011 թվականի մայիսի 11-ին Ստամբուլում, Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան:

Կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային ակտերի կարգավորումները հիմնականում ուղղված են կանանց և տղամարդկանց իրավահավասարության ամրագրմանը:

Հարկ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածը հստակ ամրագրում է այս սկզբունքը՝ ուղղակիորեն նշելով, որ կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

Անդրադառնալով կանանց և տղամարդկանց իրավահավասարությանը Մարդու իրավունքների պատշաճը նշել է, որ ըստ Սահմանադրության 86-րդ հոդվածի՝ որպես պետության քաղաքականության հիմնական նպատակ է ամրագրվել կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի օրենքում, որը սակայն գործունե մեխանիզմների բացակայության պատճառով չի կիրարկվել:

Չնայած առկա օրենսդրական կարգավորումներին՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության փաստացի իրագործման համար դեռևս առկա չեն բավարար երաշխիքներ, ինչի արդյունքում 2018 թվականի ընթացքում Հայաստանում շարունակվել են արձանագրվել կանանց իրավունք-

ների ոտնահարման և նրանց նկատմամբ խտրականության դրսևորման դեպքեր²:

Կանանց հիմնական իրավունքների պաշտպանությունն ամրագրող միջազգային իրավական ակտերից զատ, առկա են նաև մի շարք իրավական ակտեր, որոնք վերաբերում են իրավախախտումներ կատարած կանանց իրավունքների պաշտպանությանը: Այս ոլորտում կարևորագույն միջազգային փաստաթղթերից է «Ազատությունից զրկված կանանց վարվեցողության և կին իրավախախտների նկատմամբ կիրառվող՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի կանոնները, որոնք ավելի հայտնի են Բանկոկյան կանոններ անվամբ: Նշված փաստաթուղթը նախատեսված է ազատագրկման վայրերում մշտադիտարկում իրականացնող մարմինների համար:

Փաստաթղթում ընդհանուր առմամբ նկարագրվում են այն ռիսկերը, որոնց բախվում են ազատագրկված կանայք, մասնավորապես՝ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի հետ կապված, ինչպես նաև միջոցները, որոնք կարող են ձեռնարկվել այդ ռիսկերը նվազեցնելու համար: Հրապարակման գլխավոր թեման ազատագրկված կանանց վիճակն է քրեական արդարադատության համակարգում, այդուհանդերձ քննարկվող բազում հարցեր հավասարապես կիրառական են նաև այլ համատեքստում, օրինակ՝ հոգեբուժարաններում և ներգաղթողների պահման կենտրոններում³:

Թեև միջազգային իրավական ակտերով և ներպետական օրենսդրությամբ նշվում է կանանց և տղամարդկանց փաստացի իրավահավասարության մասին, սակայն հարկ է նկատի ունենալ, որ դրանք առավելապես վերաբերում են վերջիններիս սոցիալական և քաղաքական իրավունքներին, իսկ որոշակի առումով կանանց կարգավիճակից ելնելով նրանք պետք է ունենան որոշակի իրավունքներ: Մասնավորապես՝ դա վերաբերում է հանցագործության կատարման պահին, կամ դրանից հետո կնոջ հղիությանը, կամ վերջինիս խնամքին անչափահաս երեխայի առկայությանը:

Պատժի կրման ընթացքում ազատագրկման դատապարտված կանանց իրավունքներին անդրադառնալուց առաջ, հարկ է անդրադառնալ նրանց նկատմամբ նշանակվող պատիժներին և դրանց տարբերակմանը:

Այս համատեքստում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ քրեական նոր օրենսգիրքն ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի պատժատեսակների առումով ոչ մի տարբերակում չի նախատեսում կանանց և տղամարդկանց համար:

Այսպիսով՝ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության քրեական օրենսգրքի (ընդունվել է 1961 թվականին և ուժը կորցրել 2003 թվականին) 22-րդ հոդվածի համաձայն որպես բացառիկ պատժամիջոց՝ մահապատժի չեն կարող դատապարտվել մինչև հանցագործություն կատարելը տասնութ տարեկան չդարձած անձինք և հանցագործություն կատարելու ժամանակ կամ դատավճիռն արձակվելու պահին հղի վիճակում գտնվող կանայք: Մահապատիժ չի կարող կիրառվել դատավճռի կատարման պահին հղի վիճակում գտնվող կնոջ նկատմամբ:

Ազատագրվում պատժատեսակին վերաբերող 23-րդ հոդվածով ևս նախատեսված էր տարբերակում կանանց և տղամարդկանց նկատմամբ այն նշանակելու դեպքում:

Աքսորը ևս չէր կիրառվում հղի կանանց և իրենց խնամքի տակ մինչև ութ տարեկան երեխաներ ունեցող կանանց նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (ընդունվել է 2003 թվականին և ուժը կորցրել 2022 թվականին) 60-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ ցմահ ազատագրվման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս տասնութ տարին չլրացած անձինք, հանցանք կատարելու կամ դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք: Համանման կարգավորում առկա էր նաև կալանք պատժատեսակի վերաբերյալ կարգավորմամբ:

Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի (ընդունվել է 2021 թվականին) կարգավորումներն այս մասով էականորեն տարբերվում են նախորդ երկու օրենսգրքերի կարգավորումներից: Այսպիսով, նոր քրեական օրենսգրքով կանանց և տղամարդկանց նկատմամբ պատժի համակարգում որևէ առանձնահատկություն նախատեսված չէ: Միևնույն ժամանակ ուշագրավ է այն հանգամանքը, որ թե՛ նախկին, թե՛ նոր օրենսգրքի, որպես քրեական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք նախատեսված է հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի հղիությունը:

Փոփոխության է ենթարկվել նաև նախկին օրենսգրքի 78-րդ հոդվածով նախատեսված՝ հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելու կամ պատժից ազատելու կարգավորումը: Գործող քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածով նախատեսվել է հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի պատժի կատարումը հետաձգելու վերաբերյալ իրավակարգավորումը, որը օրենսգր-

քի սկզբնական տեքստում ձևակերպված էր այլ կերպ՝ «Պատժի կրումը հետաձգելը» ձևակերպմամբ:

Ի տարբերություն քրեական նախկին օրենսգրքի, քրեական նոր օրենսգիրքը սահմանում է պատժի հետաձգում երեխայի ոչ թե մինչև 3, այլ մինչև 6 տարեկան դառնալը: Մասնավորապես՝ սահմանվում է, որ մինչև 5 տարի ժամկետով ազատագրվման կամ ազատագրվումից ավելի մեղմ պատժի դատապարտված հղի կնոջ կամ խնամքին մինչև 6 տարեկան երեխա ունեցող անձի նկատմամբ նշանակված պատժի կատարումը կարող է հետաձգվել մինչև երեխայի 6 տարեկան դառնալը, եթե դատարանը համարում է, որ պատժի նպատակներին հասնելու համար պատիժն անմիջապես կատարելն անհրաժեշտ չէ⁴:

Տեսական գրականության ուսումնասիրության արդյունքում կարող ենք նշել, որ գիտնականների մի մասը գտնում է, որ կանանց իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերն ուղղված են ինչպես երեխաներ ունեցող կանանց, այնպես էլ երեխա չունեցող կանանց իրավունքների պաշտպանությանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ցանկացած կին պոտենցիալ մայր է⁵:

Կրկին վերահաստատելով այն հանգամանքը, որ հասարակական հարաբերությունների տարբեր ասպեկտներում թեև կանանց և տղամարդկանց իրավահասարությունը կարևորագույն սկզբունքն է, սակայն հարկ է նկատել, որ քրեակատարողական հիմարկում պահվող կանայք ունեն առանձնահատուկ վերաբերմունքի և պաշտպանության անհրաժեշտություն՝ պայմանավորված սեռային առանձնահատկություններով:

Միևնույն ժամանակ, ազատագրվման հետ կապված պատիժները սահմանող ներպետական իրավական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ թե՛ պատժի նշանակման, թե՛ պատժի կրման ընթացքում բոլոր արտոնությունները տրվում են միայն այն կանանց, ովքեր ունեն երեխաներ, ավելին՝ ում երեխաները բնակվում են նրանց հետ միասին՝ քրեակատարողական հիմնարկում:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) ընդհանուր առմամբ կանանց պատժի կրման հետ կապված որևէ առանձնահատուկ կարգավորում նախատեսված չէ, բացառապես այն դրույթների դրոնք սահմանում են, որ պատժի կրման ընթացքում և պահակախմբով փոխադրման դեպքում տղամարդիկ անջատ են պահվում կանանցից:

Այլ է օրենսդրի մոտեցումը հղի, կերակրող մայր և երեխա ունեցող կանանց վերաբերյալ: Մասնավորապես՝ Օրենսգրքի 90-րդ հոդվածով սահմանվում են վերջիններիս պատժի կրման առանձնահատուկ պայմանները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ բաժնով կարգավորված են կալանք խափանման միջոցի կրման կարգի ու պայմանների, ինչպես նաև հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց կալանքի առանձնահատկությունները, իսկ որոշ հոդվածներում առկա են առանձնահատուկ կարգավորումներ, որոնք վերաբերելի են անչափահասներին, հղի կամ իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող կալանավորված անձանց կամ դատապարտյալների պատժի կրման առանձնահատկություններին:

Ազատագրված կանանց վերաբերյալ առկա միջազգային իրավական ակտերի և ներպետական օրենսդրության համակարգային և համադրված վերլուծության արդյունքներով կարող ենք պնդել, որ այս ոլորտում թե՛ միջազգային կարգավորումները և թե՛ ՀՀ ներպետական օրենսդրությունն ու դրա արդյունքում ձևավորված պրակտիկան ունեն կատարելագործման կարիք, քանզի այս ոլորտի իրավակարգավորումները հիմնականում ուղղված են միայն հղի կամ իրենց մոտ երեխաներ ունեցող կանանց իրավունքների պաշտպանությանը, սակայն հարկ է նկատի ունենալ, որ կանայք իրենց սեռային առանձնահատկություններից ելնելով ունեն առանձնահատուկ վերաբերմունքի և մոտեցման կարիք և դա չի կարող դիտվել որպես կանանց և տղամարդկանց միջև խտրականության դրսևորում, այլ պետության կողմից ֆիզիոլոգիական և այլ առանձնահատկություններով պայմանավորված կանանց նկատմամբ առանձնահատուկ խնամքի և ուշադրության դրսևորում:

¹ Реализация наказания в виде лишения свободы в отношении заключенных женщин за рубежом (на примере США и Великобритании) О. А. Алфимова (<https://cyberleninka.ru/article/n/realizatsiya-nakazaniya-v-vide-lisheniya-svobody-v-otnoshenii-zaklyuchennyh-zhenschin-za-rubezhom-na-primere-ssha-i-velikobritanii>)

² <https://www.ombuds.am/images/files/e86c4068e58979a404384f75f383bb3b.pdf> (09.07.2023 թվական)

³ «Կանայք ազատագրված վայրերում» https://www.csi.am/sites/default/files/library/women_final.pdf

⁴ «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների ցնկնաբանման ուղեցույց» 2022 թվական, Երևան, էջ 186:

⁵ А. Д. Городинец “Международно-правовые стандарты обращения с осужденными и проблемы их реализации в Российской Федерации”, Санкт-Петербург, С. 336.

Аверкович П.Б. “Международные стандарты, регулирующие исполнение наказания женщин, осужденных к лишению свободы” Новосибирск, С. 296.

Արի Լազարյան

Начальник отдела развития уголовного и уголовно-процессуального
законодательства Министерства Юстиции Республики Армения

Лектор кафедры уголовного права и криминологии

Образовательного комплекса полиции РА

Соискатель Института философии, социологии и права

Национальной академии наук Республики Армения

РЕЗЮМЕ

Международные стандарты обращения с осужденными женщинами и проблемы их применения в республике армения

Статья посвящена стандартам обращения с осужденными женщинами и проблемам их применения в Республике Армения. Автор сопоставил основные международные акты и отечественное законодательство в представленной сфере и, несмотря на то, что отечественное законодательство в основных нормах соответствует национальным нормам, но все же на основе анализа автор пришел к выводу, что женщины-осужденные в силу их физиологические особенности должны находиться под присмотром.

Ключевые слова: *Женщина, заключенный, международный, стандарт, лишение свободы.*

Arpi Lazaryan

Head of the Criminal Legislation Development Department of the Criminal legislation,
Penitentiary and Probation Policy Development division of the Ministry
of Justice of the Republic of Armenia.

Lecturer of the Chair of Criminal Law and Criminology of the
Police Educational Complex of the Republic of Armenia

Applicant of the Faculty of Philology, Sociology and Law
of the Republic Academy of Sciences.

SUMMARY

International standards of treatment of female convicts and problems of their application in the Republic of Armenia

The article is dedicated to the standards of treatment of female convicts and the problems of their application in the Republic of Armenia. The author compared the main international acts and domestic legislation of the presented field and despite the fact that the domestic legislation corresponds to the national standards in the main standards, but still based on the analysis, the author came to the conclusion that female convicts due to their physiological characteristics should be in the state be under care.

Key words: *Woman, convict, international, standard, imprisonment.*

Բնագիրը ներկայացվել է 21.08.2023թ.

Ընդունվել է տպագրության 19.10.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Ն. Աբիլյանը

ԿԱՐԵՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
«ՖԼԵՇ» ՍՊԸ իրավաբան

ԿՈՐՊՈՐԱՅԻԱՆ ՀՄԿՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն գիտական հոդվածով քննարկվող հարցերը արդիական են այն առումով, որ ՀՀ գործող օրենսդրությունը չի կարգավորում վերահսկող և վերահսկվող կորպորացիաների պատասխանատվության հարցերն ու առանձնահատկությունները:

Հոդվածի նպատակն է բացահայտել վերահսկող և վերահսկվող կորպորացիաների պատասխանատվության էությունն ու բովանդակությունը, կիրառման կարգը, պայմանները և այլ առանձնահատկությունները, ինչպես նաև վեճուրային բաժնետիրական ընկերություններում այդ հարցերի կարգավորման առանձնահատկությունները:

Ներկայացված առաջարկությունների ներդրման արդյունքում կհստակեցվեն վերահսկող և վերահսկվող կորպորացիաների պատասխանատվության հարցերը, դրանց վերաբերյալ կձևավորվի միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա:

Հիմնաբառեր - վերահսկող կորպորացիա, վերահսկվող կորպորացիա, հիմնական ընկերություն, կախյալ և դուստր ընկերություններ, թափանցող պատասխանատվություն, կորպորատիվ շղարշի հաղթահարում, վեճուրային ներդրող, վեճուրային բաժնետիրական ընկերություն:

Կորպորատիվ պատասխանատվության շրջանակներում հարկ է անդրադառնալ հիմնական և դուստր ու կախյալ կորպորացիաների (կամ ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ՝ հսկող և հսկվող կորպորացիաների) պատասխանատվության բնութագրիչ գծերին ու հատկանիշներին:

Հիմնական և դուստր/կախյալ ընկերությունների բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի² (այսուհետ՝ «ՔՕ») 75-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի՝ տնտեսական ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները:

Իսկ ՔՕ 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական ընկերությունը համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերակցությունը կամ ընկերությունն ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը:

Միաժամանակ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի³ (այսուհետ՝ «ԲԸ

օրենք») 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) ընկերություն կամ ընկերակցություն նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով հնարավորություն ունի կանխորոշել այդ ընկերության որոշումները:

Ընկերությունը մեկ այլ (հիմնական) ընկերության կամ ընկերակցության նկատմամբ համարվում է կախյալ, եթե մյուս (գերակշռող, մասնակցող) ընկերությունը կամ ընկերակցությունն ունի այդ ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը:

ՔՕ 75-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը, որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, դուստր ընկերության հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար և այդպիսի իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքը նախատեսված է դուստր ընկերության հետ կնքված պայմանագրում:

Մինչդեռ, ԲԸ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հիմնական ընկերությունը (ընկերակցությունը), որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, նրա հետ համա-

պարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար, միաժամանակ այդպիսի իրավունք ունեցող է համարվում, եթե դա ամրագրված է նրանց միջև կնքված **պայմանագրում** կամ **ծագում է օրենքով չարգելված այլ ձևով**:

Վերոնշյալ իրավադրույթների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դուստր ընկերությունների վերաբերյալ **ՔՕ** և **ԲԸ** օրենքների միջև կա որոշակի անհամապատասխանություն՝ կապված ընկերության որոշումները օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշելու հնարավորություն ընձեռելու և պարտադիր ցուցումներ տալու իրավունքի հետ: Մեր գնահատմամբ, հարկ է վերանայել **ՔՕ** կարգավորումը և այն համապատասխանեցնել **ԲԸ** օրենքին:

Իրավաբանական անձի՝ պարտատերերի վստահությունը չարաշահող մասնակիցները, օգտագործելով տնտեսական ընկերության տեսքով «կորպորատիվ վահանը», երբեմն փորձում են խուսափել հսկող կորպորացիայի պարտավորություններով պահանջներից իրենց պատասխանատվության բացակայության հիմնավորմամբ՝ *sub colore juris* (թաքնվելով իրավունքով)⁴:

Հիմնական և դուստր ընկերությունների (կորպորատիվ հսկողության) հարաբերությունների հիմքում ընկած են 3 հատկանիշներ՝ 1. կանոնադրական կապիտալում գեռակշռող մասնակցություն, 2. պայմանագիր և/կամ 3. օրենքով չարգելված այլ ձև(եր): Կորպորատիվ հսկողությունը բնորոշվում է որպես կառավարչական որոշումներ, իրավաբանական անձի կառավարման կորպորատիվ ակտեր ընդունելու որոշակի իրավունքներ:

Հիմնական-դուստր հարաբերությունների առաջին չափանիշը հիմնական ընկերության՝ դուստր ընկերության **կանոնադրական կապիտալում գերակշռող մասնակցությունն** է, որը, սովորաբար կապվում է հսկիչ փաթեթի (ձայների 50%-ից ավելի) հետ:

Ե. Ռուզակովան գերակշռող մասնակցությունը բնորոշում է որպես մասնակցության չափ, որն արտահայտվում է ընկերության կանոնադրական կապիտալում ամենախոշոր տոկոսով և էականորեն գերազանցում է ցանկացած այլ բաժնետիրոջ/մասնակցի բաժնետոմսի/բաժնեմասի չափը, որի արդյունքում բաժնետիրոջ/մասնակցին հնարավորություն է տալիս ժողովի օրակարգի հարցերով քվեարկելու իր իրավունքն իրականացնելու միջոցով կանխորոշելու ժողովի կողմից իր կամքին համապատասխանող որոշումների ընդունումը:

Ըստ **Կ. Պորտնոյի**⁵ գերակշռող մասնակցու-

թյունը կարող է արտահայտվել բաժնետոմսերի/բաժնեմասերի այնպիսի փաթեթի տիրապետմամբ, որը թեև համընդհանուր հասկացությամբ (50%-ից ավելի) չի համարվում հսկիչ, բայց բավարար է դուստր կամ կախյալ ընկերության որոշումների ընդունման վրա որոշիչ ազդեցություն ունենալու համար՝ կապված մնացած բաժնետոմսերի/բաժնեմասերի փաթեթների էական բաժանվածության հետ⁷:

Մինչդեռ **Դ. Լոմակինը** նշում է, որ գերակշռող մասնակցության հասկացությունը գնահատողական է և կախված չէ կանոնադրական կապիտալում մասնակցության հստակ որոշված չափից և առաջնայինը ոչ թե քանակական, այլ որակական չափանիշն է, որը հանգում է այլ տնտեսական ընկերության կողմից ընդունվող որոշումների կանխորոշման հնարավորությանը⁸:

Կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, դրա առանձնահատկությունների հաշվառմամբ, պետք է գնահատել ինչպես քանակական, այնպես էլ որակական բնութագրիչները: Այլ խոսքով՝ հարկ է պարզել, թե ընկերությունը մեկ այլ ընկերության կանոնադրական կապիտալում ինչ ծավալի (չափի) մասնակցություն ունի, ապա՝ այդ մասնակցության միջոցով ընկերությունը գործնականում կարող է և/կամ կոնկրետ դեպքում կանխորոշել է արդյոք մյուս ընկերության (դրա մարմինների) որոշումները:

Հիմնական - դուստր ընկերությունների փոխհարաբերությունների երկրորդ չափանիշը/հիմքը երկու ընկերությունների միջև կնքված **պայմանագիրն** է: Այս համատեքստում հարց է առաջանում, թե դա պետք է լինի **ՔՕ-ով նախատեսված որևէ պայմանագիր, թե հատուկ պայմանագիր**:

Գիտության մեջ քննարկվող պայմանագրերի ներքո հասկացվում են հետևյալ պայմանագրերը՝

- 1) կառավարման պայմանագիր (միանձնյա գործադիր մարմնի լիազորությունները փոխանցելու մասին),
- 2) սովորական քաղաքացիաիրավական պայմանագիր,
- 3) կորպորատիվ պայմանագիր,
- 4) **ՔՕ-ով** չնախատեսված հատուկ պայմանագիր⁹:

Կառավարման պայմանագրի առնչությամբ առկա են իրարից տարբերվող մոտեցումներ: **Ե. Մուխանովի** կարծիքով միանձնյա գործադիր մարմնի լիազորությունները փոխանցելու պայմանագիրը առաջացնում է հիմնական ընկերության կողմից դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք¹⁰, մինչդեռ ըստ Ս. Մոզիլսկի-

ի՝ կառավարիչի և կառավարվող կազմակերպության հարաբերությունները չի կարելի դիտարկել որպես հիմնական և դուստր ընկերությունների հարաբերություններ¹¹ :

Ինչ վերաբերում է սովորական պայմանագրերով հիմնական-դուստր հարաբերությունների ծագմանը, ապա, ըստ որոշ հեղինակների, գրեթե յուրաքանչյուր քաղաքացիաիրավական պայմանագիր կարող է հիմք լինել հսկողության հարաբերությունների ծագման համար¹² :

Ի. Շիտկինան նշում է, որ այս կամ այն պայմանագիրը հողինգային հարաբերություններ առաջացնող պայմանագրերի թվին դասելը կախված է կոնկրետ պայմանագրի պայմաններից և յուրաքանչյուր պայմանագիր, որը թույլ է տալիս կողմերից մեկին կանխորոշելու մյուսի որոշումները, հողինգային հարաբերություններ առաջացնող է¹³ :

Անդրադառնալով կորպորատիվ պայմանագրերին՝ հարկ է նկատել, որ հիմնական և դուստր ընկերությունների միջև հարաբերությունները կարելի է համարել կորպորատիվ հարաբերություններ, քանի որ դրանք կապված են դուստր ընկերությունում հիմնական ընկերության մասնակցության և կառավարման հետ:

Ըստ **Ա. Զախարովի**՝ կորպորատիվ պայմանագիրը աներկբայորեն կորպորատիվ հսկողության առաջացման հիմք է, սակայն այդ պայմանագրի՝ կորպորատիվ հսկողության հիմք լինելը կախված է կոնկրետ պայմանագրի պայմաններից (ընկերության կառավարման իրավունքներ և պարտականություններ)¹⁴ :

Հատուկ պայմանագրի՝ որպես հիմնական-դուստր հարաբերությունների առաջացման հիմքի առնչությամբ ևս արտահայտվել են տարատեսակ մոտեցումներ:

Օ. Լազարևի դիրքորոշումն այն է, որ քննարկվող պայմանագիրը ՔՕ-ով չնախատեսված պայմանագիր է, որի առարկան դրա կողմերի՝ կառավարչական որոշումներ ընդունելու իրավունքը և դրանց ենթարկվելու պարտականություններն են, որպիսի պայմանագիրը կարող է լինել խառը՝ ներառելով այլ պայմանագրերի տարրեր¹⁵ :

Իսկ Ն. Կոզլովայի պնդմամբ նշված պայմանագիրը ենթակայության պայմանագիր է, և հիմնական ու դուստր ընկերությունների միջև կորպորատիվ հարաբերությունները կարող են ծագել նրանց միջև ենթակայության պայմանագրի կնքման ուժով¹⁶ :

Ա. Զախարովի տեսանկյունից կորպորատիվ պայմանագրի հիման վրա կորպորատիվ հսկողության ճանաչումը պետք է իրականացվի ոչ թե

ձևական հատկանիշով (եթե կա այդպիսի պայմանագիր, կա նաև հսկողություն և հակառակը), այլ բովանդակային՝ ելնելով կոնկրետ կորպորատիվ պայմանագրի պայմաններից, այն է՝ բավարար են արդյոք մեկի իրավունքները մյուսի որոշումները կանխորոշելու և հիմնական-դուստր հարաբերություններ որակելու համար:

Ըստ մեզ, յուրաքանչյուր պարագայում, անկախ կնքված պայմանագրի տեսակից և/կամ անվանումից (կորպորատիվ, խառը կամ այլ), հարկ է ուշադրություն դարձնել այդ պայմանագրի պայմաններին (իրավունքների և պարտականությունների համալիրին): Այլ կերպ ասած՝ եթե այդ պայմանների ուժով մեկ ընկերությունը գործնականում հնարավորություն ունի կանխորոշելու մյուսի որոշումները, ապա դա կարող է դիտվել հիմնական-դուստր հարաբերությունների առաջացման հիմք:

Կորպորատիվ հսկողության այլ հիմքերի թվին են դասվում դուստր ընկերության կանոնադրության մեջ հիմնական ընկերության ցուցումների պարտադիր լինելու ուղղակի ամրագրումը¹⁷, մեկ ընկերության կողմից մյուսի գլխավոր տնօրենին նշանակելը (կամ միանձնյա գործադիր մարմնի լիազորությունները իրականացնելը)¹⁸, դուստր ընկերության մենեջմենթի ծառայողական կախվածությունը հիմնական ընկերության մենեջմենթից¹⁹, մեկ ընկերության կողմից մյուսի բաժնետոմսերի հսկիչ փաթեթի հավատարմագրային կառավարիչ լինելը²⁰ և այլն:

Ինչ վերաբերում է կախյալ ընկերություններին, ապա մենք համաձայն ենք պրոֆեսոր Վ. Ավետիսյանի այն դիրքորոշմանը, որ պետք է հրաժարվել այդ ինստիտուտից²¹, նաև այն պատճառով, որ ոչ տեսականորեն, ոչ գործնականում այն որևէ խնդիր չի լուծում: Ավելին, ԲԸ օրենքի 7-րդ մասի կարգավորումները առավելապես ուղղված են դուստր ընկերությունների կանոնակարգմանը՝ թերկարգավորելով կախյալները:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ հիմնական (հսկող) և դուստր (հսկվող) կորպորացիաների պատասխանատվության պարտադիր բաղադրիչներն են՝

- 1) առնվազն 2 կորպորացիաների առկայությունը,
- 2) հսկող կորպորացիայի կողմից հսկվողի (կամ հսկվողների) որոշումները կանխորոշելու (ներառյալ՝ պարտադիր ցուցումներ տալու) իրավունքը/հնարավորությունը,
- 3) պատասխանատվությունը ծագում է հսկող կորպորացիայի ցուցումների համաձայն հսկվողի կնքած գործարքների կատարման, վնասներ պատ-

ճառելու, սնանկության, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Պրակտիկայում առանձնացվում են այնպիսի դոկտրինաներ, ինչպիսիք են «alter ego»-ն (երբ դուստր ընկերությունը ճանաչվում է հիմնական ընկերության մասը, «երկրորդ եսը») և «instrumentality»-ն (երբ հիմնական ընկերությունը օգտագործում է դուստր ընկերությունը որպես միջոց, «գործիք» իր նպատակների նվաճման համար՝ ի վնաս դուստրի շահերի):

Քննարկվող երկու դոկտրինաներում էլ ստուգվում են հետևյալ 2 թեստերը՝ **հսկողության կամ առանձնացվածության** (control/separateness) առկայության և **գործողությունների հակաօրինակաբանության** (wrongful conduct), ինչպես նաև դրանց միջև պատճառահետևանքային կապի (վնասների մասով) ստուգում:

Հսկողության գործոնի շրջանակներում ստուգում են՝ արդյոք առկա է դուստր ընկերության առանձնացված գոյությունը և հիմնական ընկերության կողմից չափից ավելի հսկողություն նրա ամենօրյա գործողությունների և որոշումների վրա, ինչպես նաև հիմնական ընկերությունը ինչ աստիճանի հաշվի չի առնում դուստրի անկախությունը:

Համարվում է, որ կորպորատիվ շղարշը պետք է հանվի բոլոր այն դեպքերում, երբ հիմնական ընկերությունը իրականացնում է այն աստիճանի հսկողության, որը էականորեն գերազանցում է յուրաքանչյուր խոշոր բաժնետիրոջը ներհատուկ սովորական հսկողությունը: Ընդ որում՝ հսկողության ներքո հասկացվում է ոչ թե պարզապես դուստրի ֆինանսների (կապիտալի) նկատմամբ հսկողությունը, այլ դուստրի նկատմամբ ամբողջական գերիշխանությունը²²:

Ավելին, **Ֆ. Պոուելի** կողմից առաջարկվել են նշված գործոնի 11 ենթագործոններ, որոնք հաստատում են մեկ կորպորացիայի՝ մյուսի նկատմամբ հսկողությունը²³: Այս հարցի առնչությամբ քննարկվում է նաև կապիտալիզացիայի չափը, այսինքն՝ որքանով են ընկերության ռեսուրսները և կապիտալը բավարար համապատասխան գործունեությանը բնականոն զբաղվելու համար:

Գործողությունների հակաիրավականության գործոնը ենթադրում է, որ հիմնական ընկերությունը օգտագործում է դուստրի նկատմամբ իր ունեցած հսկողությունը հակաիրավական կամ անբարեխիղճ և անարդար գործողությունների կատարման համար՝ ի վնաս դուստրի կամ չարաշահում է իր իրավաբանական կամ փաստացի լիազորությունները: Գործողությունները համարվում են հակաիրավական, եթե դրանք ուղղված են ոչ պատշաճ

նպատակի (improper purpose) նվաճմանը:

Առանձնացվում են տվյալ գործոնի 7 ենթագործոններ՝

- 1) փաստացի խարդախություն (actual fraud),
- 2) հսկվող կորպորացիայի կանոնադրության խախտում,
- 3) հսկվող կորպորացիային իր ակտիվներից զրկելը,
- 4) մոլորեցնելը (misrepresentation),
- 5) էստոպել (հսկվող կորպորացիայի շահերը պաշտպանող հանգամանքներին հղում տալու իրավունքից զրկելը)
- 6) դելիկտ և
- 7) այլն²⁴:

Ինչ վերաբերում է **պատճառահետևանքային կապի գործոնին**, նկատենք, որ այն ենթադրվում է, եթե պատասխանող ուղղակիորեն չի վիճարկում պատճառական կապը կոնկրետ վեճի շրջանակներում:

Ուշադրության և քննարկման են արժանի նաև ամերիկյան իրավակարգին բնորոշ **միասնական առևտրային ձեռնարկության** (single business enterprise) և **գործակալության հարաբերությունների** (agency) դոկտրինաները:

Միասնական առևտրային ձեռնարկության դոկտրինայի համաձայն՝ կորպորացիաները կառավարվում են ոչ թե որպես առանձին անձինք, այլ միավորում են իրենց ռեսուրսները ընդհանուր գործարար նպատակի նվաճման համար: Յուրաքանչյուր այդպիսի կորպորացիա կարող է պատասխանատվության ենթարկվել այն պարտավորությունների համար, որոնք ծագել է այդպիսի գործարար նպատակի նվաճման հետ կապված:

Պրակտիկայում առանձնացվել են 18 գործոններ, որոնք հաշվի են առնվում կոնկրետ դեպքերում: Հետևապես, քննարկվող դոկտրինայի համար էականը միասնական գործարար նպատակի և ընկերությունների խմբի սկզբունքն է²⁵:

Ըստ **գործակալության հարաբերությունների դոկտրինայի**՝ խնդրո առարկա կատեգորիայի գործերով սահմանվում է մի քանի առանձին գործող իրավաբանական անձանց առանձնացվածությունը, ապա կիրառվում են դոկտրինայի հնարքները մեկի պարտավորություններով մյուսին պատասխանատվության ենթարկելու համար:

Այս պարագայում հիմնական ընկերության պատասխանատվությունը վրա է հասնում, երբ այն դուստր ընկերության նկատմամբ իրականացնում է չափից ավելի հսկողություն: Նշված մոտեցումը կորպորատիվ շղարշի հաղթահարման դոկտրինայից տարբերվում է նրանով, որ չի պահանջվում հա-

կախրավական գործողությունների չափանիշը: Գործակալության հարաբերությունների դոկտրինան այս առումով նույնական է կորպորատիվ շղարշի հաղթահարման դոկտրինային միայն հսկողության գործոնով²⁶:

Հարկ ենք համարում նշել, որ անգլո-ամերիկյան և այլ իրավակարգերում հայտնի է «ներթափանցող պատասխանատվության» կառուցակարգը կամ «կորպորատիվ շղարշի հաղթահարման» դոկտրինան, որը ևս ենթակա է քննարկման:

«Կորպորատիվ շղարշի հաղթահարման» դոկտրինան գիտության մեջ համարվում է համալիր ինստիտուտ և բաժանվում է 2 մասի՝

1) «ներթափանցող պատասխանատվություն» և

2) կորպորացիայի հետ այն հսկող անձի «նույնացում»:

Նշված երկու հասկացությունները տարբերակվում են՝ կախված նրանից, թե հետևյալ երկու հիմնարար սկզբունքներից որն է ձևախեղվում. առանձնացման (նույնացման դեպքում) կամ սահմանափակ պատասխանատվության (ներթափանցող պատասխանատվության դեպքում) սկզբունքը²⁷:

Նախևառաջ նշենք, որ կորպորատիվ իրավունքում, որպես ընդհանուր կանոն, ընկերությունը առանձնացված է նրա մասնակիցներից (գույքային առանձնացվածության կամ առանձնացման սկզբունք), իսկ իրավաբանական անձի շահերը հաճախ կարող են չհամընկնել դրա առանձին մասնակիցների շահերին (շահերի ինքնավարության սկզբունք):

Կորպորացիայի պարտատերերի առջև հսկող մասնակիցների պատասխանատվությունը համարվում է «արտաքին» կամ «ներթափանցող» պատասխանատվություն, այսինքն՝ կորպորացիայի պարտատերն իրավունք ունի պահանջել բավարարում անմիջականորեն հսկող բաժնետիրոջից (հաղթահարել կորպորատիվ շղարշը)²⁸:

Ինչ վերաբերում է այլ իրավակարգերում քննարկվող պատասխանատվության պայմաններին (կիրառման առանձնահատկություններին), ապա հարկ է վկայակոչել դրանցից մի քանիսը:

Մասնավորապես, գերմանական իրավական պրակտիկայում ներթափանցող պատասխանատվության ենթարկելու համար հիմք են ընդունվում հետևյալ չափանիշները՝

1) գույքերը խառնելը,

2) գործունեության ոլորտները խառնելը,

3) նյութական/որակական թերկապիտալացումը (գույքի փաստացի անբավարարությունը),

4) իրավաբանական անձի ինստիտուտը չարաշահելը,

5) ոչնչացնող միջամտությունը (գործունեության մեջ ներխուժելը և բացասաբար ազդելը):

Ֆրանսիայում կիրառելի են հետևյալ խումբ պայմանները՝

1) ֆիկտիվ կորպորացիան,

2) գույքերը խառնելը,

3) դատական վերականգնական ընթացակարգը (սնանկության դեպքում ընկերության վճարունակության վերականգնման միջոց),

4) վարկունակության պատրանքը:

Նիդերլանդական կորպորատիվ իրավունքում առանձնացված են նշված չափանիշները՝

1) թերկապիտալացումը,

2) ակտիվները տեղափոխելը,

3) գերակշռությունը,

4) գույքերը խառնելը,

5) վարկունակության պատրանքը:

Խնդրո առարկա պատասխանատվության առնչությամբ ԱՄՆ-ում կիրառվում են հաջորդիվ նշված պայմանները՝

1) մոլորեցնելը,

2) կորպորատիվ ընթացակարգերը չպահպանելը,

3) գույքերը խառնելը,

4) գործունեության ոլորտները խառնելը,

5) թերկապիտալացումը,

6) գերակշռությունը,

7) անարդարությունը²⁹:

Հարկ է արձանագրել, որ կորպորացիայի պարտատերերի և այն հսկող մասնակիցների միջև ռիսկի բաշխման անհավասարակշռությունը պետք է ունենա վերականգնման պոտենցիալ «ներթափանցող պատասխանատվության» միջոցով, որը կիրառվում է միայն որպես ultima ratio (ծայրահեղ միջոց)³⁰:

«Կորպորատիվ շղարշի հաղթահարումը» չի պարունակում վտանգներ իրավաբանական անձի կառուցակարգի համար, եթե այն կիրառվում է ողջամտորեն և միայն որպես վերջնական միջոց: Ուստի, այն կարող է հավասարակշռված և հնարավորինս կանոնակարգված ձևով կիրառվել նաև ՀՀ կորպորատիվ իրավական համակարգում:

Ի վերջո, բաժնետիրական ընկերությունը որպես ձեռնարկատիրական գործունեության արդյունքում հավելյալ գույքային միջոցներ (շահութաբաժիններ) ստանալու մտադրությամբ միավորված անձանց կազմակերպություն ունի ոչ միայն առանձին բաժնետերերի մասնավոր շահերի հավասարակշռման, այլև ընդհանուր կորպորատիվ շահերի

ապահովման խնդիր: Հակառակ դեպքում ընկերության կառավարումը կդառնա անարդյունավետ, իսկ դա հետագա անդրադարձ կունենա հենց նույն բաժնետերերի սեփականության իրավունքի իրականացման արդյունավետության վրա¹:

Կարծում ենք, որ կորպորատիվ շղարշի հաղթահարման վերաբերյալ արտասահմանյան իրավակարգերում գործող պայմանները (չափանիշները) կարող են mutatis mutandis տեղայնացվել և օգտագործվել, ինչը հնարավորություն կտա կանխելու պատասխանատվության այս տեսակի վերաբերյալ կամայական մոտեցումները և կծափորվի միասնական ու կանխատեսելի պրակտիկա:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ հսկող (հիմնական) և հսկվող (դուստր, կախյալ) կորպորացիաների և կորպորացիան հսկող անձանց պատասխանատվության հարցերը ՀՀ-ում թեև մասամբ կարգավորված են, սակայն բացակայում են դրանց կիրառման ուղենիշային չափանիշներն ու պրակտիկան, որպիսի բացը կարող է լրացվել վկայակոչված արտասահմանյան փորձի ներդրմամբ:

Մյուս կողմից, քննարկվող համատեքստում անդրադառնալով հսկող և հսկվող վեճերային բաժնետիրական ընկերություններին (այսուհետ՝ «ՎԲԸ»)² հարկ ենք համարում ընդգծել, որ ՎԲԸ-ների դեպքում ևս կարող է ի հայտ գալ վեճերային ներդրողների հսկողության հարցը:

Մասնավորապես, ՎԲԸ-ի բաժնետեր վեճերային ներդրողները ներդրման համաձայնագրի (մասնականության, բաժնետիրական համա-

ձայնագրի, կորպորացիայի ներքին այլ փաստաթղթերի և այլն) հիման վրա ձեռք բերված հատուկ իրավունքների, արտոնությունների և առավելությունների ուժով կարող են վերածվել հսկող կորպորացիայի և/կամ կորպորացիան հսկող անձի և նրանց նկատմամբ mutatis mutandis կկիրառվեն վերը հիշատակված կանոնները:

Հետևապես, առաջարկում ենք նախատեսել, որ ՎԲԸ-ների բաժնետեր վեճերային ներդրողները իրենց վերապահված հատուկ իրավունքների, արտոնությունների և/կամ առավելությունների ուժով կարող են դառնալ հսկող կորպորացիա և/կամ կորպորացիան հսկող անձ (որպես հսկողության հարաբերությունների առաջացման ինքնուրույն հիմք):

Միաժամանակ, նկատենք, որ ՎԲԸ-ներին բնութագրական տնտեսական և/կամ հսկողական բաղադրիչները հնարավորություն են տալիս սահմանափակելու վեճերային ներդրողների պատասխանատվությունը կամ ազատելու դրանից, ինչը կարելի է դիտարկել որպես ՎԲԸ-ների առանձնահատկություն:

Ուստի, վերոգրյալի հաշվառմամբ, առաջարկում ենք նախատեսել՝ «կորպորատիվ շղարշի հաղթահարման» ղեկորին համապատասխան ՎԲԸ-ների մասով կիրառվում է այնքանով, որքանով դա չի հակասում ՎԲԸ օրենսդրության՝ վեճերային ներդրողների պատասխանատվությունը կանոնակարգող դրույթներին:

¹ Տե՛ս, Ավետիսյան Վ. Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը հայաստանի հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 98-99:

² ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված՝ 05.05.1998թ., Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/18(51)

³ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, Ընդունված՝ 25.09.2001թ., Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831:

⁴ Տե՛ս, Быканов Д. Д., «Проникающая ответственность» в зарубежном и российском корпоративном праве, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2018, С. 7.

⁵ Մանրամասն տե՛ս Տարբախ Ս.Վ., Восстановление корпоративного контроля. Вестник гражданского права. 2008, N4:

⁶ Տե՛ս, Рузакова Е.В., Предпринимательские многосубъектные образования: правовая модель и действительность // Правовое положение субъектов предпринимательской деятельности. Под ред. В.С. Белых. Екатеринбург, 2002, С. 220.

⁷ Տե՛ս, Портной К.Я., Правовое положение холдингов в России: Научно-практическое пособие. М., 2004, С. 21.

⁸ Տե՛ս, Ломакин Д.В., Общие положения об органах акционерного общества // Очерки теории акционерного права и практики применения акционерного законодательства. - М., 2005, С. 71.

⁹ Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 118-119:

¹⁰ Տե՛ս, Научно-практический комментарий к части первой Гражданского кодекса Российской Федерации для предпринимателей/Под ред. В.Д. Карповича. М., 1999, С. 194.

¹¹ Տե՛ս, Могилевский С.Д., Общество с ограниченной ответственностью: законодательство и практика его

применения. М., 2010. Цит. по СПС Консультант+, С. 178.

¹² Տե՛ս, Звездина Т.М., Правовое положение дочернего и зависимого хозяйственных обществ // Правовое положение субъектов предпринимательской деятельности / Под ред. В.С. Белых. Екатеринбург, 2002, С. 96.

¹³ Տե՛ս, Шиткина И.С., Основания установления холдинговых отношений //Предпринимательское право, 2005, N2, С. 6 (цитата по СПС Консультант+).

¹⁴ Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 125:

¹⁵ Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 125, Лазарев О.А., Консультация по конкретному вопросу. СПС Консультант+.

¹⁶ Տե՛ս, Козлова Н.В., Понятие и сущность юридического лица. М., 2003, С. 115.

¹⁷ Տե՛ս, Ломакин Д.В., Корпоративные правоотношения: общая теория и практика ее применения в хозяйственных обществах. М., 2008, С. 30 (цит. по СПС Консультант+), Кавелина Н. Ю., Ответственность основного общества при несостоятельности дочернего акционерного общества //Законы России: опыт, анализ, практика», 2007, N7, С. 2 (по СПС Консультант+).

¹⁸ Տե՛ս, Постановление ФЛС Уральского округа от 9 июля 2008 г. N Ф09-4806/08-С4 по делу N А47-7988/2006-33гк.

¹⁹ Տե՛ս, Постановление ФАС Северо-Западного округа от 15 мая 2002 года по делу N А56-17968/01.

²⁰ Տե՛ս, Молотников А.Е., Ответственность в акционерных обществах. М., 2006, С. 71.

²¹ Տե՛ս, Ավետիսյան Վ. Դ., նշվ. աշխ., էջ 94:

²² Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 159-160, 162-168:

²³ Տե՛ս, Powell F.J., Parent and Subsidiary Corporations. 1931, էջ 54:

²⁴ Տե՛ս, Powell F.J., նշվ. աշխ., էջ 54:

²⁵ Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 173-174, 179-185:

²⁶ Տե՛ս, Захаров А. Н., նշվ. աշխ., էջ 185-187, տե՛ս նաև Forrester C? M., Shearman & Sterling LLP, Ferber C. S., Fiduciary Duties and Other Responsibilities of Corporate Directors and Officers, Sixth Edition, 2016, էջ 137-144:

²⁷ Տե՛ս, Быканов Д. Д., նշվ. աշխ., էջ 32, 45-48:

²⁸ Տե՛ս, Быканов Д. Д., նշվ. աշխ., էջ 18, 26:

²⁹ Տե՛ս, Быканов Д. Д., նշվ. աշխ., էջ 128-141, 143-147:

³⁰ Տե՛ս, Быканов Д. Д., նշվ. աշխ., էջ 83:

³¹ Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 13.07.2010թ. քիվ ՍԴՈ-903 որոշումը/:

³² Meliksetyan K., The concept, characteristics of corporate-type legal entities (corporations) and description of governing bodies, Պետություն և իրավունք, N 3 (94) 2022 (<https://journals.yasu.am/index.php/state-and-law/article/view/8498/7982>) (վերջին մուտք՝ 202032023թ.):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

1. Ավետիսյան Վ. Դ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը հայաստանի հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ իրատարակչություն, 2013:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված՝ 05.05.1998թ., Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/18(51)

3. Բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենք, Ընդունված՝ 25.09.2001թ., Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831

4. Быканов Д. Д., «Проникающая ответственность» в зарубежном и российском корпоративном праве, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2018.

5. Сарбаш С.В., Восстановление корпоративного контроля. Вестник гражданского права. 2008, N4.

6. Рузакова Е.В., Предпринимательские многосубъектные образования: правовая модель и действительность // Правовое положение субъектов предпринимательской деятельности. Под ред. В.С. Белых. Екатеринбург, 2002.

7. Портной К.Я., Правовое положение холдингов в России: Научно-практическое пособие. М, 2004.

8. Ломакин Д.В., Общие положения об органах акционерного общества // Очерки теории акционерного права и практики применения акционерного законодательства. - М., 2005.

9. Захаров А. Н., նշվ. աշխ.

10. Научно-практический комментарий к части первой Гражданского кодекса Российской Федерации для предпринимателей/Под ред. В.Д. Карповича. М., 1999.

11. Могилевский С.Д., Общество с ограниченной ответственностью: законодательство и практика его применения. М., 2010, (цитата по СПС Консультант+).

12. Звездина Т.М., Правовое положение дочернего и зависимого хозяйственных обществ // Правовое положение субъектов предпринимательской деятельности / Под ред. В.С. Белых. Екатеринбург, 2002.

13. Шиткина И.С., Основания установления холдинговых отношений //Предпринимательское право, 2005, N2, (цитата по СПС Консультант+).

14. Захаров А. Н., նշվ. աշխ.

15. Захаров А. Н., նշվ. աշխ., Лазарев О.А., Консультация по конкретному вопросу. СПС Консультант+.

16. Козлова Н.В., Понятие и сущность юридического лица. М., 2003.

17. Ломакин Д.В., Корпоративные правоотношения: общая теория и практика ее применения в хозяйственных обществах. М., 2008, (цит. по СПС Консультант+), Кавелина Н.Ю., Ответственность основного общества при

несостоятельности дочернего акционерного общества //Законы России: опыт, анализ, практика», 2007, N7, (по СПС Консультант+).

18. Постановление ФЛС Уральского округа от 9 июля 2008 г. N Ф09-4806/08-С4 по делу N А47-7988/2006-33гк.

19. Постановление ФАС Северо-Западного округа от 15 мая 2002 года по делу N А56-17968/01.

20. Молотников А.Е., Ответственность в акционерных обществах. М., 2006.

21. Ավետիսյան Վ. Դ., նշվ. աշխ.

22. Захаров А. Н., նշվ. աշխ.

23. Powell F.J., Parent and Subsidiary Corporations. 1931.

24. Powell F.J., նշվ. աշխ.

25. Захаров А. Н., նշվ. աշխ.

26. Захаров А. Н., նշվ. աշխ., տե՛ս նաև Forrester C. M., Shearman & Sterling LLP, Ferber C. S., Fiduciary Duties and Other Responsibilities of Corporate Directors and Officers, Sixth Edition, 2016.

27. Быканов Д. Д., նշվ. աշխ.

28. ՀՀ սահմանադրական դատարանի 13.07.2010թ. քիվ ՍԴ-Ո-903 որոշումը.

29. Meliksetyan K., The concept, characteristics of corporate-type legal entities (corporations) and description of governing bodies, Պետություն և իրավունք, N 3 (94) 2022 (<https://journals.ysu.am/index.php/state-and-law/article/view/8498/7982>) (վերջին մուտք՝ 20.03.2023թ.):

Карен Меликсетян

Аспирант кафедры гражданского права ЕГУ,
юрист ООО “ФЛЕШ”

РЕЗЮМЕ

Особенности ответственности лиц, контролирующих корпорацию

Вопросы, обсуждаемые в данной научной статье, актуальны в том смысле, что действующим законодательством РА не урегулированы вопросы и особенности ответственности контролирующих и контролируемых корпораций.

Цель статьи-выявить сущность и содержание ответственности контролирующих и контролируемых корпораций, порядок применения, условия и другие особенности, а также особенности регулирования этих вопросов в венчурных акционерных обществах.

В результате внедрения представленных предложений будут уточнены вопросы ответственности контролирующих и контролируемых корпораций, по ним будет сформирована единая и предсказуемая судебная практика.

Ключевые слова: *контролирующая корпорация, контролируемая корпорация, основная компания, зависимые и дочерние компании, проникающая ответственность, преодоление корпоративной завесы, венчурный инвестор, венчурное акционерное общество.*

Karen Meliksetyan

PhD student of the Department of Civil Law of YSU,
Lawyer of “FLASH” LLC

SUMMARY

Features of liability of persons controlling the corporation

The issues discussed in this scientific article are relevant in the sense that the current legislation of the Republic of Armenia does not regulate the issues and features of the liability of controlling and controlled corporations.

The purpose of the article is to identify the essence and content of the liability of controlling and controlled corporations, the procedure for application, conditions and other features, as well as the specifics of regulating these issues in venture joint-stock companies.

As a result of the implementation of the submitted proposals, the issues of liability of controlling and controlled corporations will be clarified, a unified and predictable judicial practice will be formed on them.

Key words: *controlling corporation, controlled corporation, parent company, dependent and subsidiary companies, penetrating liability, piercing the corporate veil, venture investor; venture joint stock company.*

Բնագիրը ներկայացվել է 24.03.2023թ.

Ընդունվել է տպագրության 21.09.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Վ. Ավետիսյանը

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Եվրոպական համալսարանի իրավագիտության և
միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
իրավագիտության ամբիոնի հայցորդ

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ
ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հոդվածի նպատակը վարչական ակտի դատական կարգով բողոքարկման դեպքում, ակտի կասեցման խնդիրների վերահանումն է, որը անմիջականորեն կապված է անձի դատական արդյունավետ պաշտպանության իրավունքի հետ, դրանց լուծման ուղիների և առաջարկությունների ներկայացումը, որը բխում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների պահանջներից, որի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

Այսօր քաղաքացու դատական արդյունավետ և ողջամիտ ժամկետում պաշտպանության խնդիրն առավել արդիական է, քանի որ շատ հաճախ են խախտվում քաղաքացու դատական պաշտպանության և դատարանի մատչելիության սկզբունքները:

Հոդվածում քննարկվում են դատական կարգով վարչական ակտի կասեցման խնդիրները, վեր են հանվում գործող բացերը և առաջարկվում են լուծումներ:

Սույն հոդվածում մեր կողմից վեր են հանվել այն հնարքներն ու միջոցները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու և վեր հանելու այն խնդիրները, որոնք ներկայումս առկա են դատական ատյաններում վարչական ակտի կասեցման վերաբերյալ գործերում:

Մարդու դատական պաշտպանության իրավունքը պետք է լինի մատչելի և հնարավորություն ընձեռի խախտված իրավունքների վերականգնմանը և իրավունքների պաշտպանության ապահովմանը, իսկ այդ ձևերի իրականացման իրական երաշխիքներն են հանդիսանում իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունը, որը կատարելագործման կարիք ունի, և որոնց բացերին մենք անդրադարձ ենք կատարել վերլուծելով նաև ներկայումս գործող դատական պրակտիկան առաջարկելով արդյունավետ լուծումներ:

Հիմնադրադեպ՝ դատական կարգով բողոքարկման վարույթ, վարչական ակտ, վարչական արդարադատություն, վարչական ակտի կասեցում, դատական կարգ, հանրային շահ, մարդու իրավունքների պաշտպանություն, պետական մարմիններ:

Վարչական դատավարության ՀՀ օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ.

1. օրենքով նախատեսված է, որ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման,

2. վարչական մարմինը վարչական ակտ ընդունելիս գրավոր ձևով հիմնավորել է, որ անհապաղ կատարումն անհարժեշտ է՝ ելնելով հանրային շահերից,

3. վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտ,

4. *վիճարկվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու կամ այդ իրավունքից զրկելու ձևով վարչական տույժ նշանակելու*

վերաբերյալ վարչական ակտ.

Ապահովման տվյալ տեսակի էությունը բացատրվում է նրանով, որ վիճարկման կասեցման, հետևաբար վարչական մարմինը չի կարող պահանջել վիճարկվող վարչական ակտի կատարում, քանի դեռ այն անբողոքարկելի չի դարձել¹:

Սա նշանակում է, որ վիճարկման հայցը, սկզբունքորեն, կարիք չունի ապահովման, քանի որ վարչական ակտի գործողությունը «սառեցված է»։ Այս առումով ուշագրավ է Սահմանադրական դատարանի դիրքորոշումը, ըստ որի՝ վիճարկման հայցի բավարարման դեպքում կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը, որպես այդպիսին, պայմանական բնույթ է կրում, քանի որ այն չի ենթադրում միջնորդավորված որևէ գործողություն և այդպիսով, չի առաջացնում կատարման հետ կապված այնպիսի դժվարություններ, որոնք բնորոշ են դասական իմաստով կատարում ենթադ

րող դատական ակտերին: Ըստ այդմ՝ վիճարկման հայցի պարագայում Վարչական դատավարության օրենսգրքը նախատեսել է ոչ թե հայցի ապահովման միջոցի, այլ՝ նախնական իրավական պաշտպանության կիրառման հնարավորություն, այն է՝ վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցումը, դրանով իսկ որոշակի իրավական երաշխիքներ տրամադրելով հայցվորին՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման համար²:

Միաժամանակ դժվար չէ նկատել, որ օրենսդիրը առանձին դեպքերում բացառել է վիճարկման հայցի հարուցման փաստով վարչական ակտի կատարման կասեցումը: Այդ բացառությունների հիմքում, ըստ էության, դրված է այն գաղափարը, որ առանձին ոլորտներում կայացվող վարչական ակտերը ունեն հատուկ նշանակություն և դրանց կատարելությունը բխում է հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Այսինքն՝ կոնկրետ դեպքերում օրենսդիրը հիմք է ընդունում այն իրողությունը, որ կոնկրետ անձի դատական պաշտպանության հայցումը չի կարող, որպես կանոն, գերակայել հանրային շահերի նկատմամբ և, ըստ այդմ, դրանց կասեցումը օրենքի ուժով չի կարող տեղի ունենալ:

Ուշագրավ է, որ նման մոտեցում առկա է նաև գերմանական վարչական դատավարության իրավունքում: Մասնավորապես, վարչական ակտի կատարման օրենքի ուժով կասեցման կանոնից բացառություններ նախատեսված են այն վարչական ակտերի դեպքում, որոնք կապված են պետական տուրքերի և հարկերի վճարման պահանջների, ոստիկանության կողմից արձակված անհետաձգելի կարգադրություններ և միջոցառումներ ձեռնարկելու, դաշտային և հողերի օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերի հետ³:

Վարչական ակտի կատարման կասեցման դատավարական կարգը. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ուսումնասիրությունից հետևում է, որ գործում է վարչական ակտի կատարման կասեցման երկու ռեժիմ՝ **օրենքի ուժով և դատարանի որոշմամբ:** Ընդ որում՝ երկրորդ ռեժիմը կիրառելի է միայն այն դեպքում, երբ վարչական ակտի կատարման կասեցումը օրենքի ուժով հնարավոր չէ, այսինքն՝ առկա են վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված բացառիկ դեպքերից որևէ մեկը:

Այսպես, վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցվորի միջնորդությամբ վարչական դատարանը կարող է գործի քննության ժամանակ սույն հոդ-

վածին 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը:

Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական ակտը կասեցնելու միջնորդության վերաբերյալ որոշումը կայացվում է 3 օրվա ընթացքում, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ միջնորդությունը բավարարվում է, եթե առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

Ստացվում է, որ դատարանը կարող է կասեցնել վարչական ակտի կատարումը հետևյալ պայմաններից առնվազն մեկի առկայության դեպքում.

1. առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին **զգալի** վնաս կպատճառի,

2. առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը **անհնարին** կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

«Վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի» եզրույթի մեկնաբանությունից հետևում է, որ տվյալ գործով հայցի առարկայի շրջանակներում մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտի կատարումը հայցվոր կողմի համար կստեղծի այնպիսի բացասական հետևանքներ, որոնք նյութական իմաստով անհամեմատ կծանրացնեն հայցվորի վիճակը, իսկ «վարչական ակտի կատարումն անհնարին կդարձնի հայցվորի իրավունքների պաշտպանությունը» եզրույթի մեկնաբանությունից բխում է, որ մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտի կատարման պայմաններում հայցվորի իրավունքների պաշտպանությունն անհնարին կդառնա: Ընդ որում՝ «անհնարին» եզրույթը վերաբերվում է բացառապես տվյալ գործով ներկայացված և քննության առնված հայցի առարկայի շրջանակներում հայցվորի իրավունքների դատական պաշտպանությանը, ոչ թե հայցվորի իրավունքների պաշտպանությանն ընդհանրապես: Այսինքն՝ դատարանի կողմից վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը չբավարարելը և գործի քննության արդյունքում մույն վարչական ակտն անվավեր ճանաչելը միանշանակորեն չի հանգեցնում հայցվորի իրավունքների պաշտպանության անհնարինության⁴:

Ուշադրության է արժանի նաև «հիմնավոր կասկած» եզրույթի վերաբերյալ Վճառաբեկ դա-

տարանի դիրքորոշումը, ըստ որի՝ «հիմնավոր կասկած» եզրույթը կարելի է մեկնաբանել որպես մտքի վիճակ, որը համոզմունքից տարբերվում է նրանով, որ մտորման առարկան դեռևս միանշանակ չէ: Այսինքն՝ «հիմնավոր կասկած» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ այնպիսի ծանրակշիռ փաստարկներ, որոնց առկայության պարագայում դատարանի մոտ կձևավորվի ողջամիտ կասկած զգալի վնաս պատճառելու կամ անձի իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու վերաբերյալ: Ընդ որում՝ «կասկած» եզրույթի օգտագործումն արդեն իսկ նշանակում է, որ խոսքը չի գնում ապացույցներով հաստատվելիք փաստի մասին: Հետևաբար «հիմնավոր կասկած» եզրույթը ենթադրում է, որ հայցվորի կողմից ներկայացվածը պետք է պարունակի փաստեր կամ փաստարկներ (օրինակ՝ գույք չունենալը, անվճարունակ լինելը, բնակության վայր չունենալը և այլն), որպիսիք դատարանին թույլ կտան գալ այնպիսի հետևության, որ վարչական ակտի կատարումը չկասեցնելը հայցվորին կպատճառի զգալի վնաս կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը: Նման պայմաններում այն դեպքում, երբ ի հայտ է գալիս «կասկած», այն պետք է լինի ողջամիտ, այսինքն՝ պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված:

Ողջ շարադրյալը վկայում է այն մասին, որ օենքով բացառությունների շարքին դասվող վարչական ակտերի կասեցման շրջանակում դատարանը պետք է պատշաճ ուշադրություն դարձնի կասեցման հիմքերի առկայությանը, քանի որ դրա արդյունքում որոշակի ժամկետով կատարման հնարավորությունից զրկվում են այնպիսի կարևոր ակտեր, որոնք հանրային շահերի պաշտպանությանն ուղղված լինելու ուժով արդեն իսկ դուրս են բերվել օրենքի ուժով կասեցվող վարչական ակտերի շրջանակից: Այլ կերպ ասած՝ վարչական ակտի կատարմամբ հայցվորին զգալի վնաս պատճառելու կամ նրա իրավունքների պաշտպանությունը անհնարին դառնալու հանգամանքը դատարանի կողմից պետք է ստանա համարժեք հիմնավորում, լինի պատճառաբանված, փաստարկված, որպեսզի մյուս կողմի համար հստակ և որոշակի լինեն ժամանակավոր սահմանափակման պատճառներն ու հիմքերը:

Վարչական դատավարության օրենսգիրքը վարչական ակտի կատարումը կասեցնելու դատա-

րանի լիազորության կիրառման համար սահմանել է երկու վավերապայման, որոնցից առնվազն մեկի առկայությունը պարտադիր է վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար: Այսինքն՝ վարչական ակտի կատարումը կասեցվում է, եթե առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

Հարկ է նշել, որ դատարանը վարչական ակտի կատարման կասեցումը կարող է պայմանավորել որոշակի ժամկետով: Հետևաբար, այն բոլոր դեպքերում, երբ վարչական ակտի կատարումը կասեցնելու որոշման մեջ սահմանված է ժամկետ, ապա ենթադրվում է, որ վարչական ակտի կատարումը կասեցվել է մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինակա ուժի մեջ մտնելը:

Վարչական ակտի կասեցման հիմնախնդիրների վերլուծությունը և գործող դատական պրակտիկան:

Այսօր առկա դատական պրակտիկայում գերակշռում են այն գործերը, որոնց պարագայում *վիճարկվում է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու կամ այդ իրավունքից զրկելու ձևով վարչական տույժ նշանակելու վերաբերյալ վարչական ակտերի կատարումը, որն այսօր խնդրահարույց է և շատ դեպքերում ակնհայտորեն խախտվում են քաղաքացիների դատական պաշտպանության և ամենակարևոր ողջամիտ ժամկետում գործերի քննության սկզբունքները, քանի որ վարչական ակտի չկասեցումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունը չիրականացնելը բերում է դատական պաշտպանության անարդյունավետությանը: Մեր հոդվածում հիմնականում անդրադարձել ենք հենց տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու կամ այդ իրավունքից զրկելու ձևով վարչական տույժ նշանակելու վերաբերյալ վարչական ակտերի կասեցման հիմնախնդիրներին, որոնք այսօր մեծամասնություն են կազմում և մեր կարծիքով Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ կետը պետք է հանվի և գործի վարչական ակտի կասեցման օրենքի ուժը, քանի որ տվյալ բացառությունը շատ դեպքերում խախտում է հայցվորի դատական պաշտպանությունը և դրա արդյունավետությունը դառնում է առարկայազուրկ, որոնց վերաբերյալ առկա են բազմաթիվ դատական գործեր, որոնց մի մասը բերված է ներքևում:*

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և

անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Դատական պաշտպանության իրավունքի իրականացումը հիմնված է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական ու դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները, անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե չդիմել դատարան, իրականացնել, թե չիրականացնել իր դատական պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել հարուցված հայցով իր պահանջների առարկան՝ ծավալը, հիմքը և այլն:

Միաժամանակ անձն իր դատական պաշտպանության հիմնարար իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս, պետք է առաջնորդվեն տվյալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ դատարան ներկայացված վիճարկման հայցի վարույթ ընդունելու իրավական հետևանքը վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցումն է՝ մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրվել է վարչական դատարանի հայեցողական լիազորություն՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում ևս ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը: Ընդ որում, վարչական ակտի կատարումը կարող է կասեցվել համապատասխան հիմքերի առկայության պարագայում միայն, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին հայցվորի միջնորդությունը

պետք է պարունակի այնպիսի փաստարկներ և դրանք հիմնավորող ապացույցներ, որոնց հիման վրա դատարանի մոտ կարող է ձևավորվել հիմնավոր կասկած առ այն, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

Ըստ այդմ, միջնորդությամբ ներկայացված փաստարկներն ու դրանք հիմնավորող ապացույցները պետք է վերաբերեն վարչական ակտի կատարման հետևանքով հայցվորին զգալի վնաս պատճառելու կամ նրա իրավունքների պաշտպանությունն անհնարին դարձնելու հավանականությանը:

Կարծում ենք, որ վիճարկվող վարչական ակտի կատարման անհապաղությունը որևէ կերպ չի հավասարակշռում այն վնասին, որը կարող է առաջանալ շուրջ 6 ամիս կամ 1 տարի հայցվորին տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկելու պայմաններում: Ուստի, գտնում ենք, որ վիճարկվող վարչական ակտի կասեցումը գերակշռում է դրա կատարման անհապաղությանը, հետևաբար հիմնավոր է այն դիրքորոշումը, որ անհրաժեշտ է անկախ ամեն ինչից այս փուլում բավարարել կողմի միջնորդությունը՝ կասեցնելով վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև սույն վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, այսինքն՝ դատարանի կողմից կասեցման պարտադիրությունը պետք է զիջի օրենքով կասեցման դրույթին: (Վարչական դատավարության ՀՀ օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը պետք է հանվի):

Նաև առկա են վարչական դատարանի կողմից որոշումներ, որոնք բխում են մեր արտահայտած դիրքորոշումից, սակայն նաև կան հակառակ պնդումներ, որոնք բերված են ներքևում դատական ակտերի տեսքով և ելնելով այդ հանգամանքից դատական պրակտիկան միանշանակ չէ, որի հետևանքով առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնք մեր կողմից ուսումնասիրման են ենթարկվել սույն հոդվածում և փորձել ենք գտնել այն լուծումը, որը կբխի օրենսդրությունից և չի խախտի քաղաքացու իրավունքները քանի որ գտնում ենք, որ դատական քննության սկզբնական փուլում վարչական ակտի կասեցումը գերակա է և անհրաժեշտ, քանի որ հնարավոր է պարզվի, որ հայցվորը մեղավորություն չունի, իսկ եթե պարզվի, որ նա իրոք մեղավորություն ունի, ապա այդ օրվանից կվերսկսվի նրա իրավունքի սահմանափակումը և հետևաբար ներկայումս կասեցնելով վարչական ակտի կատարումը

րումը դա չի նշանակում, որ հետագայում հայցվորը չի գրկվելու իր իրավունքից:

«Վարչական ակտի կատարումն անհնարին կդարձնի հայցվորի իրավունքների պաշտպանությունը» եզրույթի բովանդակությունը հանգում է այնպիսի իրողության, երբ մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտի կատարման պայմաններում այլևս անհնարին կարող է դառնալ հայցվորի իրավունքների պաշտպանությունը, իսկ «անհնարին» եզրույթը վերաբերում է բացառապես տվյալ գործով ներկայացված և քննության առնված հայցի առարկայի շրջանակներում հայցվորի իրավունքների դատական պաշտպանությանը, ոչ թե հայցվորի իրավունքների պաշտպանությանն ընդհանրապես:

Ուստի, հաշվի առնելով, որ մեքենա վարելու իրավունքից հայցվորի գրկելու ժամանակահատվածը հոսում է գործի քննության ժամկետին զուգահեռ և այդ ամբողջ ժամանակահատվածում հայցվորը շարունակում է գրկված մնալ մեքենա վարելու իրավունքից: Իսկ այն պարագայում, եթե գործի քննությունը տևի վիճարկվող ակտով սահմանված մեկ տարուց ավելի, որը մեր իրականության մեջ հենց այդքան էլ տևում է, ապա հայցվորի հայցը մեխանիկորեն դառնում է առարկայագուրկ այն կառուցակարգերի շրջանակներում, որի շրջանակներում քննվում է հայցը:

Հայցվորի վարելու իրավունքի դադարեցված լինելու ժամկետի ավարտից հետո այլևս հնարավոր չի լինի վերականգնել մինչև այդ որոշման կայացումը եղած վիճակը, քանզի այդ որոշումը կատարմամբ այլևս սպառված կլինի: Իսկ դա նշանակում է, որ վիճարկման հայցի առարկայի շրջանակներում հայցվորի իրավունքների դատական պաշտպանությունն այլևս անհնարին է դառնում: Ավելին, այդ անհնարինությունը չի կարող փոխհատուցվել այլ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցատեսակի շրջանակներում հայցվորին դատական պաշտպանություն տրամադրելու միջոցով, քանզի այդ հայցատեսակը, հանդիսանալով սուբսիդիար հայցատեսակ, չի կարող ապահովել հայցվորի խախտված իրավունքների վերականգնումը, այլ կարող է միայն իրավունքի պաշտպանության այլընտրանք առաջացնել, ինչպես օրինակ վնասի հատուցումն է:

Երկրորդ՝ անձին մեքենա վարելու իրավունքից գրկելը հանդիսանում է պատասխանատվության միջոց, որպիսի միջոցը կարող է ի կատար ածվել ինչպես անմիջապես որոշման ուժի մեջ մտնելու պահից, այնպես էլ այն դեպքում, երբ պատաս-

խանատվությունը սահմանող վարչական ակտը դատական կարգով վիճարկվելուց հետո այնուամենայնիվ չի վերացվել, այսինքն՝ դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո: Այսինքն՝ վարելու իրավունքից գրկելու պատասխանատվության միջոցը չունի հստակ կանխորոշված կատարման ժամանակահատված և կարող է կատարվել նաև բողոքարկման արդյունքում կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Իսկ այն պայմաններում, երբ առկա չէ վարչական ակտի ի կատար չածվելու վտանգ, այսինքն՝ ամեն դեպքում վարչական ակտը կատարվելու է, չի կարող արդարացված լինել նաև դրա կատարումը չկասեցնելու և հայցվորի համար մեխանիկորեն իրավունքների պաշտպանության իրացման վտանգ առաջացնելու գործողությունը, քանզի մի կողմից վտանգ է առաջանում տվյալ գործով ներկայացված և քննության առնված հայցի առարկայի շրջանակներում հայցվորի իրավունքների դատական պաշտպանության ապահովման հետ կապված, մյուս կողմից առկա չէ որևէ վտանգ, որ հայցվորն իրեն առաջադրված պատասխանատվությունը կկրի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Իսկ հատկորոշված իրավիճակում գերակայություն պետք է տրվի հայցվորի իրավունքների պաշտպանության ապահովմանը, որի պարագայում գտնում ենք, որ վարչական ակտի կասեցումը պետք է գերակա լինի, հետևաբար ստանում ենք մի իրավիճակ, որ ամեն անգամ հայցվորը պետք է դատարանին ներկայացնի ապացույցներ, որոնք կվկայեն, որ ակտի չկասեցումը կարող է զգալի վնաս պատճառել, այնինչ եթե օրենքով սահմանվի կասեցումը, ապա հայցվորը վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ամեն դեպքում կրելու է պատասխանատվություն իր կատարած արարքի համար, իր համար անբարենպաստ վճռի դեպքում:

Այսինքն վարչական ակտի կասեցման բավարարումը դեռ չի նշանակում, որ վերջնական դատական ակտով հայցվորը ազատվելու է պատասխանատվությունից, այլ գործի ընթացքում ելնելով փաստական հանգամանքներից է որոշվելու հայցվորի մեղավորությունը:

Վերոգրյալի հիման վրա, քանի որ վիճարկվող որոշումը հանդիսանում է որոշակի ժամկետով՝ մեկ կամ երկու տարով, ընդունված միջամտող վարչական ակտ, իսկ դրա իրավաչափությունը դատական կարգով ստուգելու գործի քննությունը, այդ թվում նաև՝ հնարավոր բողոքի քննությունը նաև վերադաս դատական ատյաններում, կարող է գերազանցել այդ ժամկետը, ուստի հայցվորի միջնորդությունը՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու

մասին, մեր կարծիքով ենթակա է բավարարման ամեն պարագայում, քանի որ այսօր գործերը դատարանում տևում են 1 տարուց ավելի:

Ընդ որում, արձանագրենք, որ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 123.5-րդ հոդվածի չորրորդ մասով սահմանված իրավախախտումը կատարելու համար նախատեսված պատասխանատվության միջոցն ուղղված է անձին տրանսպորտային միջոց վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով զրկելուն՝ անկախ ժամանակահատվածից: Այսինքն՝ օրենսդիրը չի կարևորել, թե կոնկրետ, որ ժամանակահատվածում անձը պետք է զրկված լինի տրանսպորտային միջոց վարելու իրավունքից, այլ կարևորել է դրա տևողությունը, ուստի դատարանի գնահատմամբ, նշված մեկ տարին կարող է հաշվարկվել նաև վարչական ակտի իրավաչափությունը դատական կարգով ստուգելուց հետո:

Ուստի, գտնում ենք, որ վիճարկվող վարչական ակտի կասեցումը գերակշռում է դրա կատարման անհապաղությանը, հետևաբար ՀՀ վարչական դատարանն իրավասու է և պետք է բավարարի հայցվորի միջնորդությունը՝ կասեցնելով վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև սույն վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Այսպես, թիվ ՎԴ/3431/05/22 վարչական գործով դատարանը կայացրել է վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարելու մասին որոշում՝ հիմնվելով, որ միջնորդության մեջ դրված փաստարկներն այն մասին, որ հայցվորի երեխաները անչափահաս են, բավարար է, որպեսզի հայցվորին պատճառվի զգալի վնաս և այդ իսկ պատճառով միջնորդությունը ենթակա է բավարարման⁵:

Դատարանը գտել է, որ այն հանգամանքը, որ Հայցվորը ամուսնացած է, ունի անչափահաս երեխաներ և իր կարիքները հոգալու համար մատուցում է տաքսի ծառայություններ, բավական է վարչական ակտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու համար⁶:

Մեկ այլ գործով դատարանը արձանագրել է, որ այն հանգամանքը, որ հայցվորը աշխատում է որպես վաճառքի գծով մենեջեր, որի պարտականությունների մեջ է մտնում տրանսպորտային միջոցներով տարբեր խանութներ այցելելը և պատվեր գրանցելը և դրանով իսկ հոգում է իր ընտանիքի ծախսերը բավարար է, որպեսզի արձանագրվի զգալի վնաս պատճառելը և որ այդքանը բավարար հիմք է վարչական ակտի կատարումը կասեցնելու

վերաբերյալ միջնորդությունը բավարարելու համար⁷:

Այս մեկ գործով միջնորդության հիմքում դրվել է այն հիմնավորումը, որ, վարչական ակտը ժամկետային բնույթ ունի, իսկ հաշվի առնելով հնարավոր վերաքննության ժամկետը նշված վարչական ակտի ժամկետը կարող է սպառվել, ապա դատական պաշտպանության իրավունքի իրացումը կարող է կորցնել իր նշանակությունը հայցվորի համար, դառնալ անիմաստ և առարկայագուրկ: Ուստի վարչական ակտի կատարումը կարող է վերջնադրությունքում անհնարին դարձնել հայցվորի իրավունքների պաշտպանությունը և հետևաբար վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է բավարարման⁸:

Սույն վարչական գործով դատարանը գտել է, որ հայցվորի իրավունքների պաշտպանությունը կարող է դառնալ անհնարին, քանի որ վիճարկող որոշումը որոշակի ժամկետով է՝ մեկ տարով, իսկ դրա իրավաչափությունը դատական կարգով ստուգելու գործի քննությունը, այդ թվում նաև՝ հնարավոր բողոքի քննությունը նաև վերադաս ատյաններում կարող է գերազանցել այդ ժամկետը, ուստի հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ Վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ, ենթակա է բավարարման⁹:

Այսպիսով, վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ վարչական ակտի կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է բավարարման ցանկացած պարագայում, քանի որ հնարավոր է հետազայում 1 տարուց ավելի ժամկետում պարզվի, որ հայցվորը մեղավոր չէ և դրա հետևանքով նրա իրավունքների պաշտպանությունը կդառնա անիմաստ և անհնարին:

Արդյունքում վիճարկվող վարչական ակտի կասեցման հիմքում պետք է դրվի բացառապես հայցվորի իրավունքների հետագա պաշտպանությունն անհնարին դարձնելու հանգամանքը:

Այսինքն ցանկացած գործով հայցի առարկան վերաբերում է հենց այն որոշման վիճարկմանը, որով արձանագրվել է հայցվորին մեղսագրվող արարքը: Ուստի մինչև սույն վարչական գործի ավարտը գործում է հայցվորի անմեղության կանխավարկածը:

Տվյալ պարագայում ներկայացվել է վիճարկման հայց և վիճարկվում է ժամկետային վարչական ակտ: Վիճարկվող ակտում նշված ժամկետում սույն վարչական գործը կարող է լինել չավարտված և դեռևս առկա չլինի օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Հետևաբար գործով վիճարկվող ժամկետային

վարչական ակտը կկորցնի իր իրավաբանական ուժը, որի պայմաններում հայցվորը զրկված կլինի վիճարկել այն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածում ներկայացված կարգավորման իմաստով և վերջինս կարող է միայն ներկայացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հայց՝ նույն նորմով սահմանված դեպքերում:

Նման պայմաններում առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը զգալի վնաս կպատճառի հայցվորի իրավունքների պաշտպանությանը: Եթե գործի քննության արդյունքում պարզվի, որ վիճարկվող որոշմամբ հայցվորը ոչ իրավաչափորեն է զրկվել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մեկ տարի ժամկետով, վերջինս հնարավորություն չի ունենա ակնկալել մինչև իր իրավունքի ենթադրյալ խախտումը եղած դրության վերականգնում:

Հետևաբար, հայցվորի դատական պաշտպանության իրավունքի և վիճարկվող ակտով պաշտպանվող հանրային շահի հավասարակշռման տեսանկյունից վիճարկվող ակտի կատարումը չկասեցնելը ավելի մեծ վնաս կհասցնի հայցվորին, քան կասեցումը հանրային շահին:

Ելնելով այդ հանգամանքից գտնում ենք, որ *տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցնելու կամ այդ իրավունքից զրկելու ձևով վարչական տույժ նշանակելու վերաբերյալ վարչական ակտը դատական կարգով բողոքարկելու պարագայում այն պետք է օրենքի ուժով կասեցվի և ոչ թե ընդգրկվի այն բացառությունների շարքում, որի պարագայում օրենքով դատական պաշտպանություն հայցող կողմի պարտադիր միջնորդության հիման վրա դատարանը ամեն դեպքում կայացնի որոշում, քանի որ ինչպես վերևում հիմնավորվեց, դրանով խախտվում է հայցվորի դատական պաշտպանության իրավունքը և արդյունքում այդ պաշտպանությունը շատ դեպքերում դառնում է անիմաստ և առարկայազուրկ:*

Եզրակացություն

Հաշվի առնելով վերևում բերված փաստերը, կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները՝

• *Վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ կետը պետք է հանվի և գործի վարչական ակտի կասեցման օրենքի ուժը, քանի որ տվյալ բացառությունը շատ դեպքերում խախտում է հայցվորի դատական պաշտպանությունը և դրա արդյունավետությունը դառնում է առարկայազուրկ:*

• Եթե վիճարկվող վարչական ակտի կասեցումը գերակշռում է դրա կատարման անհապաղու-

թյանը, հետևաբար հիմնավոր է այն դիրքորոշումը, որ անհրաժեշտ է անկախ ամեն ինչից այս փուլում բավարարել կողմի միջնորդությունը՝ կասեցնելով վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, այսինքն՝ դատարանի կողմից կասեցման պարտադիրությունը պետք է զիջի օրենքով կասեցման դրույթին:

• Հայցվորի դատավարական իրավունքի դադարեցված լինելու ժամկետի ավարտից հետո այլևս հնարավոր չի լինի վերականգնել մինչև այդ որոշման կայացումը եղած վիճակը, քանզի այդ որոշումը կատարմամբ այլևս սպառված կլինի: Ավելին, այդ անհնարիությունը չի կարող կոմպենսացվել այլ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցատեսակի շրջանակներում հայցվորին դատական պաշտպանություն տրամադրելու միջոցով:

